ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԳՈՐԾՈՂ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մոսկվա

Իբրև առաջին սպասավորը Հայ Եկեղեցու, հարգալից զգացումներով Ձեր ազնիվ ուշադրությանն ենք հանձնում հետևյալ հարցը.

Լեռնային Ղարաբաղի հայության արդար սպասումների շարքին կարևոր ենք համարում Ձեզ տեղյակ պահել այն իրողությանը, որ այդ մարզի ամբողջ տարածքի վրա 1932 թվականից ի վեր չի գործում ոչ մի հայկական եկեղեցի: Մինչև 1929–32 թվականները Լեռնային Ղարաբաղում գործել են 18 հայկական վանքեր ու շուրջ հարյուր գյուղական եկեղեցիներ իրենց կենտրոնը ունենալով Գանձասարի վանքը (Մարտակերտի շրջան), որպես եպիսկոպոսական աթոռանիստ կենտրոն:

Վերջին տասնհինգ տարիներին Մենք մի քանի անգամներ թե գրավոր և թե բանավոր խնդրանքներ ենք ներկայացրել՝ գոնե մի վանք՝ Գանձասարի վանքը բացելու, սակայն Բաքվի իշխանությունները ընթացք չեն տվել:

Գանձասարի վանքը կառուցվել է 1238-ին հայկական դասական ճարտարապետական ոճով և եղել է միշտ Հայ Եկեղեցու կենտրոնը ամբողջ Ղարաբաղի հայ քրիստոնյաների: Բոլորովին անհասկանալի և անհիմն կերպով վերջերս Բաքվի իշխանությունները որոշել են Ղարաբաղ-Արցախի պատմական հայ վանքերը նկատել ոչ հայկական: Սա աղաղակող հակապատմական և ոչ բարեկամական մի վերաբերմունք է, ժխտելու փորձ

հայ քրիստոնյա ժողովրդի բազմադարյան ներկայությունն ու կյանքը Լեռնային Ղարաբաղում:

Լեռնային Ղարաբաղի հայ եկեղեցիների հարցին տեղյակ է Մոսկվայի կրոնական դավանությանց Խորհուրդը և հույս ունենք, որ նաև Ձեր բարյացակամ օժանդակությամբ արդար կարգադրություններ կկատարվեն մեր երկրի օրենքների համաձայն, բավարարելու համար Ղարաբաղի հավատացյալների բազմաթիվ դիմումները, մի քանի վանքեր ու եկեղեցիներ բացելու համար:

Մենք վստահ ենք, թե Լեռնային Ղարաբաղում 3—4 վանքեր ու եկեղեցիներ բացելը մեծ նպաստ պիտի լինի բնակչության հոգևոր վիճակի խաղաղեցման և հնարավորություն պիտի ստեղծվի, որ մեր հոգևորականները եկեղեցական կյանքի ճանապարհով քարոզեն հայ ու ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության և եղբայրության մասին:

Ներփակում ենք պատմական տվյալներ Գանձասարի վանքի մասին:

Խորին հարգանքով և գնահատանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
27 հուլիսի 1988 թ.